Մադինայի, իսկ հետագայուն նաեւ գրեթե ամբողջ Արաբիայի կառավարումը, որը վերաբերում էր կյանքի բոլոր ոլորտներին, իրականացվում էր Մուհամմադ մարգարեի ժուրթերով հայտնվող Ալլահի խոսի՝ Ղուրանի, ինչողես նաեւ ասծո առաջալի անմիջական ղեկավարությունը ձեւակերպող որոշումների սնորհիվ: Դասկանալի է, որ հավատացյալ մուսուլմանների համար վաղ ժամանի ուսմայի կաղաղարը հանդիսանում է բացարձակ իդեալ, որին ամփածեւ է ձգտել: Սա վերաբերում նաեւ կյանքի սնտեսական ոլորտին:

Ինչողես հայտնի է, Ղուրանում եւ հաղիսներում¹ կան ուղղակի ցուցումներ այն մասին, թե ինչ սկզբունքներով դեմք է իրականացվեն տարբեր սնտեսական գործառություններ: Դրանցից կարեւորագույններն են *զախարի*², *ուօրի*³ եւ հարկային ոլորտը կարգավորող այլ դրույթները, դարսք տրվող գումարի համար տոկոսադրույթը (*րիբա*) արգելող Ղուրանի հանգառողը, ցուցումները ժառանգության կարգի վերաբերյալ⁴ եւ այլն:

Համաձայն ուլեմների, իսլամի՝ սոցիալական եւ սնտեսական ոլորտներին վերաբերող ամենակարեւոր կարգավորիչ սկզբունքը արդարությունն է (*աղլ*), որը դեռևս միջնադարում մանրամասն մշակվել է տարբեր մուսուլմանական կրոնա-

իրավական ուղղություններին դատկանող գիտնականների կողմից: Այլ եզրը Դուրանում ամենահաճախակի օգտագործվող բառերի թվին է դատկանում, ինչն ինըստիմֆյան արդեն ընդգծում է այն կարեւորությունը, որը տվում էր այս հասկացությանը: Առաջին հերթին աստվածաբանական եւ բարոյական կատեգորիա լինելու հետ միասին, աղջ հանդիսանում է նաեւ հասարակության մեջ սոցիալական եւ սնտեսական հարցերի կանոնակարգիչ:

Այստիսով, ընդունելով աղջը որպես լիարժեք սնտեսական կատեգորիա՝ իսլամական տեսությունը մարդու սնտեսական գործունեության մասին ձեռք է բերում ոչ միայն սնտեսագիտական, այլ նաեւ էթիկական ուղղվածություն, ինչը թույլ է տալիս այս կորպատով խոսել արդեն, ինչպես գրում են Ժամանակակից մուսուլմանական գիտնականները, «իսլամի սնտեսական արժեքների համակարգի» մասին, որը հանդիսանում է մուսուլմանական արժեքների համակարգի անբակտելի մասը:

Իսլամի կարեւորագույն սկզբունք՝ բացարձակ միասվածությունը (թաուհիդ), սնտեսական ոլորտում ձեռք է բերում մի լրացուցիչ իմաս. այն այնուև է կարգավորում «հոգեւորի» եւ «նյութականի» հարաբերակցությունը, որ հոգեւորը հանդիսանում է մարդու եւ հասարակության կյանքի բոլոր ոլորտների, այդ թվում նաեւ սնտեսական, բացարձակ կանոնակարգող: Այս առաջնային սկզբունքի վրա է հիմնվում «իսլամական սնտեսական համակարգի» վերաբերյալ ժամանակակից տեսությունը:

Համաձայն այդ տեսության, մուսուլմանական գործարարական դրակտիկան իրականացվում է երկու հիմնական ձեւերով. «մոլիֆավաղա»՝ առեւտրական հաստատությունների միջեւ կմբլող երկարաժամկետ համաձայնություն, որն ընդգրկում է

դայմանավորվածություններ փոխադարձ, ինչողես նաեւ միասնական առեւտրական գործունեության եւ փոխօգնության մասին, եւ «ինամ»՝ նույնահիդ համաձայնություն, որը, սակայն, վերաբերում է միայն աղբանի մի տեսակի առեւտրին⁵:

Ուշեմները եւ մուսուլմանական սնտեսագետները համաձայնվում են, որ կարելի է առանձնացնել գործարարական դրակտիկայի հինգ առանձին տեսակ. *մուկառադա*, *շարիֆաթ ալ-ինամ*, *շարիֆաթ ալ-արդան*, *շարիֆաթ ալ-վուջուհ* եւ *շարիֆաթ ալ-մուֆազադա*: *Ալ-Մուկառադան* նշանակում է գործընկերություն կատիտալի եւ աշխատանի միջեւ, երբ եկամուտը բաժանվում է համաձայն նախնական դայմանավորվածության, բայց կորուսը բաժին է ընկնում միայն դրամատիրոջը, քանի որ համարվում է, որ մյուս կողմն արդեն կորցրել է իր աշխատանիը, ժամանակը եւ նախաձեռնությունը: *Շարիֆաթ ալ-արդանը* այնպիսի համաձայնություն է, որը նախատեսում է միայն առեւտրական համագործակցություն՝ առանց կատիտալների միավորնան: *Շարիֆաթ ալ-վուջուհը*՝ համաձայնություն է առեւտրի վարկավորման մասին: *Շարիֆաթ ալ-մուֆազադան* իրենից ներկայացնում է դայմանագիր, որով միավորվում են գործընկերների դրամագլուխները, եւ նախատեսվում է փոխադարձ աղահովագրում⁶:

Շարիֆաթը, որը *Ալլահի* կողմից ումնային թելադրված օրենն է, հիմնվելով վերը հիշատակված *աղյ-ի* սկզբունի վրա, արգելում է տեղեկատվական ասիմետրիկությունը, որը հոյի է անկանխատեսելի կորուսներով (*Դարար*), սղեկույսահիվ եկամուտը (*Մեյսար*) եւ վարկային տոկոսը (*Իիբա*):

Դարար բառացիորեն նշանակում է «մոլորության մեջ գցել»: Տնտեսական տեսության մեջ *Դարարը* դատաղարտվում է, քանի որ համարվում է, թե գործարի ավելի տեղեկացված կողմն ունի առավելություն մյուս կողմի նկատմամբ: *Դարար* դարունակող դայմանագրերի օրինակները բազմազան են.

այնողիսի աղրանի վաճառք, որն այդ դահին չի դատկանում վաճառողին կամ գործարք, որի վերաբերյալ կնքված դայնանգում չի նշվում հստակ գինը, այլ գրվում է, օրինակ՝ «ընթացիկ շուկայական գնով», իիվանդ անասունի վաճառք եւ այլն:

Մեյսարը Դուրանում գործածվում է որդես ազար խաղ նշանակող եզր: Խաղամոլությունը խստագույնս դատաղարտվում է խլամում, իսկ շարժաթիվ նորմերը ուղղակիորեն արգելում են այն: Ժամանակակից սնտեսական տեսության մեջ այս եզրը ստացել է եւս մեկ նշանակություն՝ դրամական զանգվածների սղեկուլյատիվ նորականերով տեղաշարժեր, որոնց արդյունքում չեն ստեղծվում նյութական արժեներ, ծառայություններ, գիտական եւ տեխնոլոգիական նորություններ եւ այլն: Սակայն այդ ժիղով դրամական հոսքերը ներկայումս հսկայական ծավալներ են ստացել եւ մեծ նշանակություն ունեն ժամանակակից սնտեսական կյանքում:

Այստեղ բանն այն է, որ խլամական սնտեսական նորմերը չեն ընդունում արեւմտյան սնտեսության համար այնողիսի հիմնարար սկզբունք, համաձայն որի՝ դրամը նույնութես աղրանի հանդիսանում, այսինքն՝ կարող է վաճառվել եւ եկամուտ բերել:

Այստեղից էլ բխում է «*rիրայի*» բացառումը: Բառացիորեն «*rիրա*» նշանակում է «հավելած», «ավելացում», այսինքն՝ բանի որ դրամը աղրանի չի հանդիսանում, աղա այն չի կարելի տոկոսով տալ ուրիշին՝ աղահովելով դրամով «հավելած», վաշխառուական եկամուտ:

Խլամական բանկերի դրակտիկայում այս հարցը հետեւյալ լուծումն է ստանում: Ռար ալ-մալլ (բառացիորեն՝ դրամատեր) ներ է դնում գործարքի մեջ անհրաժեշտ գումարը, իսկ մուդարիք (գործակալ) իրականացնում է այն իր աշխատանի միջոցով: Եկամուտը բաժանվում է համաձայն

դայմանավորվածության: Այս մոդելը բանկերը կիրառում են ոչ թե վարկավորելով գործարքը, այլ ֆինանսավորելով այն՝ բանկի շրջանառու միջոցները ձեւավորող իրենց հաճախորդների ներդրումներից: Գործարքից ստացվող եկամուտը բաժանվում է բանկի հաճախորդների հաշվեհամարների մեջ՝ համաձայն նրանց հաշվին եղած գումարի ծավալի: Այսինքն՝ իր հաճախորդների հետ գործարքներում արդեն բանկն է հանդես գալիս որպես *մուդարիթ*, իսկ հաճախորդը՝ որպես *ռար ալ-մայ*:

Ծարիաթի արգելվները դեռևս XIX դարում որոշակիորեն խոչընդոտեցին իսլամական երկրներում բանկային կառիտալի զարգացմանը, ինչը, իր հերթին, բացասականորեն անդրադարձավ ընդհանուր սնտեսական զարգացման վրա: Միաժամանակ նոր սնտեսական հարաբերությունների ձեւավորումը ստիղեց ուլեմներին լրջորեն զբաղվել ծարիաթի նորմերի՝ նոր իրավիճակին համադատասխանեցնելու աշխատանքով, որը սկսվեց դեռևս 1880-ականներին՝ մուսուլմանական մոդեռնիսմների գործունեությամբ եւ որոշակի ու ամբողջականացված տես սկսեց ձեռք բերել միայն անցած դարի վերջին տասնամյակներին:

Իսլամական սնտեսական կաղաղաւոր հիմնականում իրականացվում է իսլամական բանկերի միջոցով: Առաջին իսլամական բանկերը ստեղծվել են 1963թ.՝ միաժամանակ Եգիպտոսում եւ Սալայիայում: Սակայն իսլամական բանկային համակարգի ձեւավորումը տեղի է ունենում շատ ավելի ուժ՝ 1970-ականների կեսերին եւ կաղված է Արեւմուսի «մեծ եներգետիկ զգնաժամի» հետ, որի շնորհիվ նավթ արտահանող երկրները ձեռք բերեցին գերահույթներ: Այդ շահույթների կուտակումը ստեղծեց ծավալուն դրամական զանգված, որի մի մասը ակումուլացվեց նորաստեղծ սառնդական, էմիրայական, բահրենյան, կատարյան եւ այլ բանկերում: 1975թ. Զիդդայում՝ Իսլամական կոնֆերանս

կազմակերպությանը կից հիմնվեց Զարգացման իսլամական բանկը, որի հիմնական խնդիրներից է՝ օժանդակել իսլամական տնտեսական կաղաղարի եւ իսլամական բանկային համակարգի կայացմանը եւ զարգացմանը: Նույն յոթանասունականների վերջին ստեղծվեցին իսլամական առեւտրարդյունաբերական դալասը, Առեւտրի զարգացման իսլամական կենտրոնը, ավելի ուժ՝ նաեւ իսլամական ներդրումային ընկերությունը, իսլամական ֆինանսական ընկերությունը, իսլամական հաշվադահական հաշվառման եւ առողիքի կենտրոնը եւ այլն:

Արդեն իննասունականների վերջին ստեղծվեցին Միջազգային իսլամական ֆինանսական ռուկան եւ իսլամական ֆինանսական հաստատությունների գերագույն խորհուրդը: Դրանի փաստորեն որոշում են իսլամական բանկային եւ առեւտրային բաղաբականությունը՝ իրենց ջանքերը հիմնականում ուղղելով ենթակառուցվածքների ստեղծման խնդիրն, որի լուծումը թույլ կտա՝ միավորելով իսլամական արժեթղթերի (*սուլիմ*) և երերի գումարները, ստեղծել իսլամական ընդհանուր ռուկա:

Մուսուլմանական ֆինանսական հաստատությունների հիմնական մասը գտնվում է Միջին Արեւելի տարածաշրջանում՝ Եգիպտոսից մինչեւ Իրան: Նրանց համընդհանուր կառիտալը հավասար է 13,4 մլրդ դոլարի, ուշագույն միջոցները՝ 195 մլրդ դոլար: Պետական բանկերը չնայած բանակով ավելի քիչ են, բայց իրենց միջոցների ծավալներով գերազանցում են մասնավոր կառիտալին դաշկանող բանկերին: Այսդիսի հաճամասնությունը հիմնականում աղահովվում է իրանական բանկային համակարգի ընորիկվ, բանի որ այս երկրում բոլոր բանկերը իսլամական են եւ դաշկանում են դեմությանը⁷:

Արեւմուտքում առաջին իսլամական բանկը՝ «Իսլամիկ Բենֆինգ Սիստեմ» անունով, գրանցվել է 1978թ.

Լյուլսեմբուրգում: Ներկայումս համաշխարհային առաջին կարգի բանկերի ճնշող մեծամասնությունն իր կազմում ունի շարիաթի նորմերին համադատասխան բանկային գործառույթներ իրականացնող իսլամական ստորաբաժանումներ, որոնք սղասարկու են հավատացյալ մուսուլման գործարարներին:

Դեսք է նշել սակայն, որ իսլամական ֆինանսաբանկային համակարգը մինչեւ այժմ դուրս չի եկել համաշխարհային բանկային շուկա: Այն հիմնականում շարունակում է ուղղված մնալ իսլամական ներքին ֆինանսական շուկաների դահանջները բավարարելուն:

Իսլամական բանկային համակարգի, ինչողևս նաեւ իսլամական սնտեսական կաղապարի հետագա զարգացման մասին վերլուծաբանները եւ փորձագետներն ունեն տարբեր, հաճախ իրար հակասող կարծիքներ: Նույնիսկ մուսուլմանական երկրները ներկայացնող որոշ մասնագետներ արտահայտում են այն կարծիքը, որ իսլամական բանկերը կարող են զարգանալ, եթե շարիաթի նորմերի մեջ փոփոխություններ կատարվեն եւ վերանայվի դրամի նկատմամբ մոտեցումը, այսինքն՝ այն ընդունվի որդես աղրանք, որի հետ կարելի է կատարել այն բոլոր գործառույթները, որոնք կատարվում են աղրանքների մյուս ժեսակների հետ: Այլաղես, կարծում են նրանք, այդ բանկերը կամ դատապարտված են լինելու մնալ նեղ սահմաններում եւ չզարգանալ, կամ էլ երեսպատճեն շարիաթի դահանջներին համադատասխանեցնելով՝ այլ կերպ անվանել այն ավանդական գործառույթները, որոնք ոչ իսլամական բանկային գործունեության հիմնական մասն են կազմում:

* Տեղին է մեջ բերել Անդրեյ Ժուրավլեևի հետեւյալ կարծիքը. «Խոսելով իսլամական սնտեսական կաղաղարի մասին՝ մենք, բնականաբար, հաշիվ ենք տալիս մեզ, որ սնտեսությունը, ինչողես, ասենք, ֆիզիկան, չի կարող լինել իսլամական, քրիստոնեական, հուդայական կամ բուդդայական: Ասելով «իսլամական սնտեսություն»՝ մենք հասկանում ենք սամադարս սնտեսական համակարգ, որը տարբերվում է միայն նրանով, որ համադարասախան դավանանքը նրան դարտադրում է բարոյական համալիր՝ որդես համակարգային բալանսի գործոն: Կիրառական առումով դա նշանակում է նաև տարիաթի կողմից ընդունված ֆինանսական մենեջմենթի սկզբունքների օգտագործում: Տվյալ կաղաղարի այս յուրահատուկ հատկանիւր, բնականաբար, չի բացառում կիմնական օրենքները, որոնք իսլամական սնտեսության մեջ գործում են ճիշտ այնպես, ինչողես ցանկացած նյուում»:—ԻցՌՈՉստ՞ Ը. ՂՈՎՈՎՐՈՅՉՕ, փ8ցՇՈՒ, ԽՏՐՈՎ.-ԿՑՄՓՄՐՑՉՄՎՎՈԴ ԶՈՒՇԵՍՈ, No. 5, 2003, Ծ., թ. 383.

1 Մուհամմադ մարգարեի (570 - 632թթ.) խոսքը եւ գործը վավերագրող հակիրծ արձակ դամություններ, որոնց համալիրը կազմում է սուննան, որը ճանաչվում է որդես Ղուրանից հետո իսլամի երկրորդ կարեւորագույն աղբյուր:

2 Յարկ, որը հավաքվում է չբավորների կարիքները հոգալու համար: Սովորաբար քարգմանվում է որդես «մաֆրում», բանի որ այս հարկի վճարումը «մաֆրում» է հարսությունը եւ թույլատելի դարձնում նրանից օգտվելը: Զարաքը վճարում են միայն չափահաս աշխատումակ տղամարդիկ, այն բաժանվում է աղբասների, չբավորների, անվճարունակ դարտաղանների, զարաք հավաքողների, իրախուսանի արժանի անձանց եւ ջիհադի զինվորների միջեւ:

3 Յողագործության արտադրանքի եկամուտի 10%-ի չափով հավաքվող հարկ: *Ուշը էին վեցնում նաև այլադավանների առեւտրական գործունեությունից ստացվող եկամուտներից:*

4 Ժառանգների կազմը եւ մասնաբաժինները Դուրանում եւ հաղիսներում հստակ նույնագույն են, այսինքն՝ ժառանգություն թողնողի կամքը հաշվի չի կարող առնվել:

5 Zubaids S. Economic and Political Activism in Islam. L., 1972, p.284.

6 Ghous A.M.Islamic Economic Sistem: Planning of International Trade. Karachi, 1979, p. 14.

7 HSBC Economic Bulletin, 4th Quarter, 2002.

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՅԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՋԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Արաբի Փառայան

Ահարեկչությունն աշխարհի ամենասուր հիմնախնդիրներից մեկն է, որ հատուկ է մարդկային բոլոր հասարակություններին եւ ժամանակներին:

Ահարեկչությունը կանխամտածված եւ նղատակառւղղված բռնարարք է՝ հանուն բաղաֆական, գաղափարական կամ սոցիալ-սմիտսական նղատակների: Ահարեկչությունը կարող է ընկալվել նաեւ ազատության, ազգային կամ կրոնական գաղափարների դաշտամության տեսանկյունից:

Անհնար է չարձանագրել, որ միջազգային հարաբերությունների արդի փուլում մեծ տարածում եւ լայն ընդգրկում ունի իսլամական ահարեկչությունը: Այն միջազգային ահարեկչության մաս է կազմում եւ գործում է թե՝ իսլամի տարածման ավանդական ցցաններում, թե՝ դրա սահմաններից դուրս: Իսլամական ահարեկչությունը լուրջ սղառնալիք է դարձել աշխարհի անվտանգությանը եւ հանգեցրել ոչ մահմեդական աշխարհի տեսանկյունից իսլամի աղճամանն ու արժեզրկմանը:

Կրոնական մոլեռամությունը (fanaticism) հատուկ է իսլամական ծայրահեղականությանը (extremism), որը ահարեկչությունը օգտագործում է որպես մեթոդ եւ նղատակին հասնելու արդյունավետ միջոց: Այս գաղափարախոսության մարտիկները՝ մոջահիղները (արաբերեմ՝ Աստօն համար մարտնչողներ) ռազմական եւ գաղափարական լայն դատրասվածություն են անցնում, իսկ ահարեկչական

գործողությունների ընթացքում սղանվելու դեղին՝ որակվում որպես *շահիդ* (արաբերեն՝ նահատակ, զոհ):

Չնայած արդի փուլում իսլամական արմատական կրոնա- խաղաթական հոսանքներն ու ուղղությունները աւրբեր նղատակներ են հետաղմղում, սակայն նրանց բոլորի գաղափարական արժեհամակարգը հիմնված է իսլամական սկզբունքների վրա: Նրանք դայլարում են թե՛ Ներին, թե՛ արտաքին թօնամինների դեմ: Ներին խնդիրները հիմնականում ներառում են իսլամական դետություններում աշխարհիկ վարչակարգերի տաղալումն ու իսլամական կարգերի ստեղծումը: Ներին թօնամինները մահմեդականներ են, որոնք, նրանց տեսանկյունից, գործում են ոչ իսլամի ցրանակներում:

Արտաքին ոլորտը ոչ մահմեդական աշխարհն է, որի նկատմամբ իսլամական արմատականների արժեհամակարգը հիմնված է իսլամական որուակի սկզբունքների վրա: Ըստ այդմ՝ աշխարհը բաժանված է *իսլամի* աշխարհի՝ Dar al-Islam (որտեղ աղրում են մահմեդականները եւ որը կառավարվում է իսլամի օրենքներով), եւ դատերազմի աշխարհի՝ Dar al-Harb (որտեղ աղրում են ոչ մահմեդականները եւ կառավարվում ոչ իսլամի օրենքներով) միջև: Սակայն մահմեդականների շարունակական դայլարի՝ *Զիհադի* արդյունուում Ասծոն խոսքը՝ իսլամը, ի վեցող կիաստասվի երկրագնդի վրա, եւ ամբողջ աշխարհը կվերածվի իսլամի աշխարհի՝ ումնայի: Մահմեդականներն ի վեցող կկարողանան վերականգնել իսլամի փառքն ու հզորությունը: Իսլամական արմատականները բացառապես իսլամով են դայմանափորում աշխարհի զարգացման ընթացքն ու աղագան: Իսլամական այս սկզբունքները, ի վեցող, վերածուն են տուալ գաղափարախոսության, որի նղատակն է անողոք դայլարը արեւմտյան արժեհամակարգի եւ աշխարհի «անհավատ» բնակչության դեմ՝ նաեւ տուալ բռնությունների միջոցով: Արմատականները վկայակոչում են Ղուրանը եւ իավատացած են, որ իսլամի առաքելության դաւադանության

դեմքում շահած են դուրս գալու. «(Ալլահը) ներում կօնորիի ձեր մեղքերին եւ ձեզ կառաջնորդի դրախս (*jannat*), որի ընդերֆով գետեր են հոսում, կրնակեցնի ձեզ դրախսի այգիների հրաշալի կացարաններում: Դա մեծագույն արքայություն է» (Դուրան, «Սուրաթ աս-Սաֆ», 61;12): Յաղիսներում նշված է, որ Զիհաղի մեջ ներգրավվածները մեծ առավելություններ են ունենալու թե՛ երկրային, թե՛ երկնային կյանքում՝ «Ալլահը դրախտում հարյուր հանգրվան է նախատեսել նրանց համար, ովքեր կմարտնչեն իր ճանաղարիին»:

Ահաբեկչություն իրականացրած իսլամական կազմակերպությունների մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում արաբական արեւելիի կրոնա-քաղաքական այն կազմակերպությունները, որոնց գործունեությունն ընթացել է ղաղեստինյան եւ արաբա-իսրայելական հակամարտության ժամանակներում եւ ուղղված եղել իսրայել ղետության ու սիոնիստական գաղափարախոսության դեմ: Զինված գործողություններ իրականացնելով իսրայելի կողմից գրավյալ արաբական, ներառյալ ղաղեստինյան տարածքներում՝ նրանք նողատակ են հետաղներ արաբական տարածքների ազատագրումը, ինչողևս նաեւ ղաղեստինյան անկախ ղետության ստեղծումը: Նրանց կարծիքով՝ Արեւմուստը ագրեսիվ քաղաքականություն է իրականացնում Մերձավոր Արեւելիում, ինքանավորում իսրայելին, որին կարելի է հակազդել միայն արյամբ:

Ղետարերություն է ներկայացնում այն հարցը, թե ինչողևս է դիտարկվում ահաբեկչությունը մահմեդական աշխարհի տարբեր ժամանակների (արմատական, չափավոր, դաշտոնական եւն) տեսանկյունից:

Միջազգային հանրությունը, «Հիգբալլա» կազմակերպության հոգեւոր առաջնորդ այաթոլա Մուհամմադ Յուսեյն Ֆադլալահի համոզմամբ՝ հակված է իսլամականների մեջ միայն ահաբեկիչների տեսնել, մինչդեռ Արեւմուստը մոռացել

Է գաղութասիրության ցրջանի դատմությունը: «Մեզ դաշիւ է բերում այն, որ մեզ ահարեկիչներ են անվանում, իանի որ ամերիկյան լեխիկոնում “terrorism” նշանակում է ազատագրական շարժում եւ հակազդեցություն օկուլացիային»: «Իհարկե, մենք իսկական ահարեկիչներ չենք: Մենք հարգում ենք բոլոր ժողովուրդներին եւ ցանկանում ենք, որ բոլոր ժողովուրդները խաղաղ աղբեն: Սակայն մենք հարգում ենք նաև մեզ, մեր երկիրն ու մեր ժողովրդին, մենք թույլ չենք տա, որ որեւէ մեկը իր կամքը թելադրի մեզ...»: Նշենք, որ «Յիզրալլա» կազմակերպությունը 1980-ականներից սկսած գինված գործողություններ է իրականացրել Խորայելի դեմ՝ նոյատակ ունենալով ազատագրել 1982թ. Խորայելի կողմից օկուլացված Լիբանանի հարավը:

Խորայելի դեմ բազմաթիվ ահարեկչական գործողություններ իրականացրած դադեստինյան կազմակերպություններից «Համասը» եւ «Զիհար ալ-խւամին» ձգտում են արդարացնել Խորայելի խաղաղ բնակիչների դեմ իրականացրած ահարեկչությունը՝ նշելով, որ իրենց գործողություններն ուղղված են եղել միայն Խորայելական բանակի դեմ, իսկ զոհերը բաղադացիների ցրջանում ամեն դատերազմի վնասներից են: Իր հերթին Խորայելի կառավարությունը դետական ճակարդակով եւ ավելի ընդլայնված ձեւով է ահարեկչություն իրականացրել Պաղեստինի դեմ: Արաբ իրավաբան ալ-Աֆրան, խոսելով դադեստինցի ժողովրդի նկատմամբ Խորայելի իրականացրած բռնությունների մասին, մասնավորապես նշում է. «...Այնքան ժամանակ, իանի դեռ գոյություն ունեն կառավարություններ, որոնք ընդունակ են հետևողականորեն զրադվել ահարեկչությամբ, դատախան ահարեկչական գործողությունները մնում են որդես միակ հնարավոր հակազդեցությունը նրա զոհերի համար»:

Պաղեստինյան ահարեկչության մեջ հատկանշական են ահարեկչական գործողությունները, որոնք իրականացվում են

մարդաւաս վայրերում, մահաղարտների կողմից: Ուշագրավ է, որ վերջին տրանում այս մեթոդն օգտագործում են նաև չեչեն մահաղարտները:

Իսլամական ահաբեկչական կազմակերպությունների մեջ հասկաղես առանձնանում է «ալ-Կախղան», որի առաջնորդը ողջ աշխարհի մահմեղականներին կոչ է արել ամենուր սղանել ԱՄՆ քաղաքացիներին, ինչողես նաև նրանց դաշնակիցներին: Արմատականների ղատկերացմանք՝ ԱՄՆ-ը չարիփի եւ բռնության մարմնավորում է, մի ղետություն, որ ձգտում է թելադրել իր կամքը եւ քաղաքականությունը ամբողջ աշխարհին: Այդ է ղատճառը, որ 2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած անախաղեղ ահաբեկչական գործողությունը իսլամական ծայրահեղականները դիտարկեցին որդես ԱՄՆ-ին ղատժելու իրական միջոց:

Սակայն մահմեղական աշխարհում ահաբեկչությունն իրարամերժ գնահատականներ ունի: Ռուսաստանի Դաշնության մահմեղականների գերազույն մոլոֆի, ժեյխ ուլ-իսլամ Թաղլաթ Թաջուդիֆինի կարծիքով՝ իսլամական արմատականները աղավաղել են իսլամի նուանակությունը: Կրոնական մոլուանությունը ծնում է անհանդուժողականություն, որն ի վերջո հանգեցնում է ահաբեկչության: Նրա կարծիքով՝ իսլամիզմը ոչ միայն իսլամը չէ, այլև իսլամի ժխտումն է, նրա հոգեւոր եւ ավանդական էության մերժումը, որ սղառնալիք է առաջին հերթին ճշմարիտ իսլամի համար:

Ահաբեկչության նկատմամբ մահմեղական աշխարհի ղաւոնական դիրքորոշումն արտահայտել է իսլամական բարձրագույն քաղաքական մարմինը՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը (ԻԿԿ): ԻԿԿ-ն առաջարկել է իրավիրել միջազգային ֆորում՝ սահմանելու ահաբեկչության ֆենոմենը՝ «...առանց ընտրողականության կամ երկակի չափանիշների (double standards)», որ կօգնի հայտնաբերել ահաբեկչության առաջացման ղատճառները, արմատախիլ անել դրանք եւ

հասնել միջազգային անվտանգության եւ կայունության հաստամանը: ԻԿԿ-ն ընդգծում է, որ մերժում է որեւէ կադ տեսնել ահաբեկչության եւ իսլամական ու արաբական մահմեդական ժողովուրդների՝ հանուն ինքնորոշման, ինքնաղաւողանության, ինքնիշխանության եւ օսար տիրապետության դեմ դայլարելու իրենց իրավունքների միջեւ: ԻԿԿ կարծիքով՝ իսլամը ահաբեկչական կրոն ներկայացնելը կարող է վնաս հասցնել աշխարհի ժողովուրդների միջեւ գոյություն ունեցող հարաբերություններին: ԻԿԿ-ն անթույլատելի է համարում ահաբեկչության ընդլայնումը, անգամ եթե այն կիրառում է որեւէ իսլամական երկիր՝ օգտագործելով իսլամը շահադիտական նոյատակների համար:

Ինչեւէ, իսլամը շարունակում է ակտիվ դերակատարություն ունենալ մահմեդական աշխարհի բաղաբական գործընթացներում: Իսկ ահաբեկչությունը գնալով մեծ չափեր է ընդունում, սաստկանում է մոլեռանդությունը, որոնց դեմ ուղղված դայլարը թվում է անհաղթահարելի անգամ ամենահզոր ուժերի եւ գերազանցությունների համար, որոնք ոչ դակաս դերակատարություն են ունեցել ահաբեկչական կազմակերպություններից շատերի ձեւավորման եւ գոյատեւման հարցում:

ՀԱՄԱԹՈՒՐՔՎԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻԹ-Ի ԶԻՆԱՆՇԱՆԸ ԳԵԼՈՐԳ ՅԱՂՋՅԱՆ

Թուրքիայի Հանրապետությունում այսօր գործում են դեռական անվտանգության երեք ծառայություններ՝ բանակի գլխավոր տարի Հետախուզության գլխավոր վաշչությունը, արտաքին գործերի նախարարության Տեղեկատվության եւ ուսումնասիրությունների վաշչությունը եւ Ազգային հետախուզության կազմավորումը («Միլլի Խսքիհբարաթ Թեսֆիլաթի», կրօնական՝ Միթ), որը համարվում է երկրի հիմնական գաղտնի սղասարկությունը:

Միթ-ը դեռական առանձին կառույց է եւ չի մտնում որեւէ նախարարության կազմի մեջ: Միթ-ն անմիջականորեն ենթակվում է վաշչաղետին, եւ նրա ղեկավարն ունի վաշչաղետի գլխավոր խորհրդականի կարգավիճակ:

Մեր ուսումնասիրության առումով հետաքրքրական է այն փասդ, որ Միթ-ն իր դատմության սկիզբ է հայտարարում 1913թ. նոյեմբերի 17-ը, երբ «Միլլի Խսքիհբարաթ Թեսֆիլաթի» կուսակցության եռաղետության անդամ, Օսմանյան կայսրության դատերազմական նախարար էնվեր փաշան հիմնեց «Հատուկ կազմավորումը» («Թեսֆիլաթի Մահուլսեն»):

«Թեսֆիլաթի Մահուլսեն» հաւաքետու էր միայն «Միլլի Խսքիհբարաթ Թեսֆիլաթի» կուսակցության ղեկավարությանը եւ ոչ թե օսմանյան դեռությանը: Միթ-ը, իր դատմությունը տանելով մինչեւ «Թեսֆիլաթի Մահուլսեն», հստակորեն արտահայտում է իր համաթուրքական էությունը, այլադես կառույցի հիմնադրման թվական դեմք է հոչակեր 1926թ. հունվարի 6-ը, երբ հիմնվեց Միթ-ի նախորդը՝ «Ազգային աղահովության ծառայությունը» («Միլլի Էմնիյեթ Հիզմեթի»):

Իբրիհադական դոկտոր Նազըմի ղեկավարած «Թեօֆիլաք-ի Մահսուսեն» կարեւոր դեր խաղաց Մեծ Եղեռնի իրազրծման մեջ: Միթ-ը երեխ դա եւս նկատ ունի, երբ իր դաշտունական կայթչում (ինտերնետային սայթ) նույն է, թե «այդ կազմակերպությունը... կարեւոր առաջադրանքներ է կատարել եւ ռազմական ու կիսառազմական գործունեություն է տարել Առաջին համաշխարհային դատերազմի ընթացքում»:

Համաթուրքական գաղափարախոսությունը իր վառ արտահայտում է գտել Միթ-ի զինանշանում: Վերջինս (stեւ www.mit.gov.tr) բաղկացած է հետևյալներից.

1. Թուրքիայի Հանրապետության հիմնադիր եւ առաջին նախագահ Մուսաֆա Քենալի (Աքարտուր) դիմադաւելը՝ Թուրքիայի քարտեզի, երկրագնդի, մահիկի եւ հնգաբեւ աստի ետնաբեմի (ֆոնի) վրա:

2. Կրկնակի ցըշանակներ, որոնց միջեւ տարածության վերեւում Միթ-ի թուրքերն անուն է, ներբեւի կողմում՝ 16 ասդեր:

3. Դափնու տերեւներով զարդարված ցըշանակ:

Ըստ դաշտունական բացառության.

– Աքարտուրը «խորհրդանուում է Միթ-ի հավատարմությունը Աքարտուրի սկզբունքներին եւ բարեկարգումներին»: Քաղաքագիտական եւ դատամագիտական գրականության մեջ այդ սկզբունքներն ընդունված է կոչել «վեց սլաքներ»: Դրանք են՝ հանրապետականությունը, ազգայնականությունը (ինա՞ թուրքիզմը Թուրքիայի սահմաններում, համաթուրքականությունը՝ նրա սահմաններից դուրս), աշխարհիկությունը, հեղափոխականությունը, էտաշիզմը եւ ժողովրդայնությունը:

– Երկրագնդի ֆոնի վրա դաշտված Թուրքիայի քարտեզը.— Մրա մասին ասվում է. «Թուրքիայի Հանրապետությունը աշխարհի դետություններից մեկն է եւ, որ աշխարհն, ընդհանուր վերցրած, Միթ-ի հետարքությունների ցըշանակում է գտնվում»: Նույն կայթչում եւ այլուր հայտարարվում է, որ Միթ-

ի գլխավոր նղատակը թրության շահերի դաշտանությունն է ամենուրեք: Դայսնի է, որ թուր դաշտնական ու գիտական շրջանակները, եւ ոչ միայն նրանք, «թրություն» ասելով հասկանում են ոչ միայն ներկայիս Թուրիայի տարածում աղրողներին, այլև՝ թուր ցեղից սերող բոլոր մարդկանց: Դետեւաբար, հասկանալի են դառնում Միթ-ի համաթուրական հեռահար նղատակները: Սի ուրիշ աղացույց է նույն կայիշջում տեղ գտած հետեւյալ հաստատումը. «Աշխարհում անկայունության 22 հարցերից 14-ը ամբողջությամբ կան մասնակիորեն առնչվում են մեր երկրի աղափությանը»: Այդ հարցերի մեջ են մասնում, օրինակ, Չինաստանի թուրացեղ ուղղություների եւ Չեչնիայի անջատողական շարժումները:

– 16 աստղերը «խորհրդանօւմ են դատմության ընթացքում հիմնված թուրական անկախ տասնվեց դետություններին»: Այդ դետությունները, ըստ թուրական դաշտնական դատմագրության, սկսվում են շումերական դետությունից: Թուրական դետություններ են հայտարարվում Յիթիթական դետությունը, Բարելական կայսրությունը եւ Արարատյան (Վանի) թագավորությունը կամ Ուրարտուն: Մեկ խոսքով, դատմության խեղաթյուրումը իր տեղն է գտել Միթ-ի զինանշանում: Դետեւաբար, զարմանալու կարիք չկա՝ իմանալով, որ դատմության խեղաթյուրումը մասնում է Միթ-ի Չոգեբանական դաշտանության գլխավոր վարչության գործառույթների մեջ:

– Թուրիայի հարեւեի կողմից դուրս եկող եւ 16 աստղերին միշված ճառագայթները «խորհրդանօւմ են այն արձենները, որոնք Թուրիայի Յանրադետությանը ժառանգ են մնացել անցյալից, եւ հաստատում են դատմության հետ կաղը»: Եթե նկատի ունենանք, որ «թուրական» համարվող դետություններից շատերը (Մոնղոլական եւ Օսմանյան կայսրություններ, սելջուկյան դետություն եւն) ծավալադաշտագրեսիվ դետություններ էին, որոնցից էլ այսօրվա Թուրիան

«արժեքներ» է ժառանգել, աղա մի անգամ եւս դարձ է դառնում ներկայիս թուրքական դետության համաթուրքական ծավալաղացությունը:

– Մահիկն ու աստղը. – Ինչողես Թուրքիայի դրոշի դեղինում, Միթ-ի զինանշանում էլ նրանց առկայությունը բացատրվում է «Անկախության, Ազգային միասնականության եւ Միության» խորհրդանշաններ լինելով:

– Դափնու ՏԵՐԵՆԵՐՆՎ ԾՐՁԱՆԱԿԸ. – «Խորհրդանշում է Աքարուրի կողմից Թուրքիայի Հանրապետության համար նախատեսված «Խաղաղություն ՏԱՅՐ, Խաղաղություն աշխարհում» հիմնական բաղադրականությունը»:

Թե ինչողիսի խաղաղություն է դա՝ դարձ Երեւում է հենց Թուրքիայի Հանրապետության 80-ամյա դատմությունից: Բավարար է ասել, որ այս ժամանակահատվածում նա գրավել է Սիրիայի Ալեքսանդրետի Ծրջանը, Կիոյրոս կղզու հյուսիսային մասը, տարածքային հավակնություններ է տածել հյուսիսային Սիրիայի, Իրաքի հյուսիսի նավթային ծրագրերի նկատմամբ, բազմից սղառնացել է Հայաստանի Հանրապետությանը եւ Հունաստանին:

Միթ-ի նշանաբանն է՝ «ՄԵՆՔ ԹՈՒՐ ՄԵԾ ԱԶԳԻ ԺԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՆՔ»: Միշտ դեմք է նկատի ունենալ, որ «ԹՈՒՐ ՄԵԾ ԱԶԳԸ» աշխարհատարած թուրքացեղ ժողովուրդների հանրագումարն է, եւ Թուրքիայի Հանրապետության բոլոր կառույցները, որոնց ծարքում՝ Միթ-ը, առաջնորդվում են դետական հստակ գաղափարախոսությամբ՝ թուրքականություն ԵՐԿՐԻ ԱԵՐՍՈՒՄ ԵՒ ՀԱՄԱԹՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՆՐԱ ՍԱՀԻՆԱՄՆԵՐԻց դուրս:

ԱՌՈՂՋ ԱԶԳԱՅԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սամուել Դանտինգտոն

Դասվի առնելով Ամերիկայում դահղանողականության եւ ազատականության միջեւ տարբերություններն ու ընթացող բանավեճերը՝ հառուկ ուսադրության են արժանի դահղանողական մտածողության Յ բնորոշչէ գծերը՝ հավասն առ Աստված, մարդկային բնության հայեցակարգը եւ ծառայումն ազգին:

Ի տարբերություն ազատականության, դահղանողականությունն արմատավորված է կրոնում: Իհարկե, որու ազատականներ կրոնական մարդիկ են, բայց մնացյալ մեծամասնությունը հակված է աշխարհիկ կյանքի, հանդիսանում է աթեիս կամ ազնոսիկ: Եվ չնայած դահղանողականները կարող են գործուն մասնակցություն ունենալ կամ չունենալ եկեղեցու գործերին, սակայն հազիվ թե հնարավոր լինի հանդիսանալ դահղանողական՝ չլինելով հավատացյալ: Քանի որ դահղանողականները հավատում են Աստոն, իսկ ամերիկացիները՝ ոչ մեծ, բայց կարեւոր հրեա փոնրամասնությամբ հանդերձ, ճնշող մեծամասնությամբ քրիստոնյա են, աղա ամերիկյան դահղանողականության համար Աստված Դին ու Նոր Կրակարանների աստվածն է: Ժամանակակից Ամերիկայում կրոնական շարժումն ու դահղանողականությունը ուս ուսի տված, համատեղ հանդես են գալիս սեկուլյարիզմի (աղակրոնացման), ռելյաժիվիզմի (հարաբերատաւության) եւ ազատականության դեմ: Պահղանողականության համար մարդը բնավ էլ ամեն ինչի չափանիւը չէ: Գոյություն ունեն Աստված եւ Գերագույն օրենք՝ բնական կամ աստվածային, որ ենթակա չէ մարդուն: Ժխտելով Աստոն եւ մարդկային կամքի հնարավորությունները

գերազանցող գերազույն օրենքի գոյությունը՝ մարդը սկսում է գահավիժել ներեւ՝ դեղի բարոյական անարխիա: Այլընտրանֆային սեկուլյար մոտեցումը հիմնված է նրա վրա, որ մարդը հանդիսանում է ամեն ինչի եւ չափանիշը, եւ արարիչը, որ անհատներն ու հասարակությունները իրենք են որոշում, թե իրենց համար որն է լավ եւ որը վաս, եւ այդ որոշիչներն ուժի մեջ են մնում այնքան ժամանակ, քանի դեռ դահլյանում են իրենց նշանակությունը:

Կրոնը հանդիսանում է մարդկային խառնվածքի ու փոխհարաբերությունների դահլյանողական հայեցակարգի աղբյուր: Պահլանողական ընկալմամբ, մարդ արարածն ընդունակ է սիրո, վեհանձնության, հերոսության եւ անձնազրության, բայց նաև՝ ատելության, ընչափացության, փորձության, բռնության, ճախանձի, ամբարտավանության եւ իշխանատենչության: «Սկզբնական մեղքն» իրականություն է. չարությունը հատուկ է մարդկային խառնվածքին: Եվ բանի որ, Մարդիսնի խոսերով, մարդիկ իրեւսակներ չեն, առա կառավարություններն (այլ սոցիալական մեխանիզմների հետ մեկտեղ) անհրաժեշտ են, որդեսզի վերահսկեն նրանց եւ, իրենց հերթին, նույնութեա դեմք է գտնվեն հսկողության տակ: Պահլանողական հեռանկարում չարիքը կարելի է մեղմացնել ու կասեցնել, բայց ոչ կործանել: Յակադիր հայացքները հիմնվում են նրա վրա, որ մարդկանց ի սկզբանե հատուկ է բարությունը, իսկ չարիքը սխալ ինստիտուների եւ բաղաբանության արդյունք է: Եթե մարդիկ կարողանան գտնել ճիշտ ինստիտուներ ու բաղաբանություն, առա կխուսափեն դատերազմներից, հանցագործությունից, աղբատությունից, անհավասարությունից եւ այլ արատներից:

Այսուհետով, դահլյանողականությունն ընդհարումները եւ նույնիսկ բռնի ընդհարումները համարում է մարդկային խառնվածքի անխուսափելի դրսեւորում: Խմբերում ու հասարակություններում գոյություն ունեն շահերի իրական

բախումներ: Դրանք չեն հանդիսանում թյուրիմացության, անհավասի տեղեկատվության կամ անհեռատեսության արդյունք, այլ արմատավորված են մարդկային բնության, եսամոլության, ինչորես եւ՝ հարստության, անվտանգության ու իշխանության համար դայլարի մեջ: Չնայած փոխադարձ շահը հնարավոր է, սակայն համարյա բոլոր իրադրություններում առկա են հաղթողներ ու դարտվողներ կամ, ծայրահեղ դեմքում, անձինք, որոնք շահել կամ կորցրել են ավելի շատ, եւ անձինք, որոնք շահել կամ կորցրել են ավելի քիչ: Հակադիր դիրքորոշումն այս է, որ անհատների ու խմբերի միջեւ գոյություն ունի բնական ներդաշնակություն, եւ որ առճակատմանները, հատկապես դետությունների միջեւ, թյուրիմացությունների ու նրանց «իսկական» շահերի չըմբռնման արդյունք են: Ազատականները հակված են համարել, թե առճակատման երկու կողմերն էլ շահագրգիռ են փոխադարձ համաձայնության եւ ձգտում են հասնել դրան: Պահուանողականները գտնում են, որ երկու կողմերն էլ հավասարապես շահագրգիռ են հաղթանակում եւ ջանում են կորցել այն: Ազատականները կարծում են, թե մարդկանց միջեւ համագործակցության խորացումը հետևացնում է շահերի փոխադարձ ընկալումը, մոտեցումն ու համաձայնեցումը: Պահուանողականներն այդ առիթով լուրջ կասկածներ ունեն:

Ազատականները հակված են հավատալ, թե ընթացիկ հիմնական առճակատման ավարտը, ինչորիսին էլ որ այն լինի, նշանակում է բոլոր առճակատմանների ավարտ: Պահուանողականները գիտեն, որ մի ընդհարման վերջը հող է ստեղծում մյուսի համար: Նրանք համաձայն են Ռոբին Ֆուսի հետ, թե «Դատերազմները հիվանդություն չեն, որ կարելի է բռնժել, այլ մարդկային բնականոն հարաբերությունների մի մաս: Դրանք առաջանում են նրանից, որ մենք կանք, այլ ոչ այն անակնկալմերից, որոնք մեզ հետ ժամանակ առ ժամանակ դատահում են: Դրանք, ինչորես կրնն ու դորնկությունը,

հանդիսանում են մարդկային իհմնական մտավախությունների եւ սղասումների առաջնային դաշտախանները»: Մյուս կողմից, ազատականները համարում են, որ դատերազմները ժեղումներ են, որոնք կարելի է վերացնել՝ ժողովրդների միջեւ երկխոսության, միջազգային առեւտրի ընդլայնման, սղառազինությունների վերահսկման դայմանագրերի կատարման, ռազմական ծախսերի կրճատման եւ ՍԱԿ-ի հզորացման միջոցով:

Դաշվի առնելով այս աշխարհի էությունը՝ դահղանողականները երկրին նվիրվածությունը Աստծոն նվիրվածության հետ դասում են մի ժարդում: Դայրենասիրությունը երեւի գլխավոր դահղանողական առափնյությունն է: Պահղանողականներն անչափ հավատարիմ են իրենց երկրին, նրա արժեքներին, մշակույթին եւ հասառություններին: Ի սարբերություն ազատականների մեծամասնության, նրանք միջազգային կազմակերպությունները դիտում են ոչ որպես ինքնին բարօրություն, այլ՝ որքանով դրանք օժանդակում են ամերիկյան ազգի բարեկեցությանը: Ազատականներն առավել հակված են, ինչդես Մարթա Նասբաումը, «ազգային հղարտությունը» դիտել որդես «բարոյական վտանգ» եւ նախարհավադարձացիությանը (հայրենասիրությունից առաջ) տալ աշխարհաբարձրացիությանը: Մյուս կողմից, դահղանողականները համաձայն են քոռվրիջի հետ նրանում, որ աշխարհաբարձրացիությունը, որ իհմնված չէ ազգայինի վրա, իրենից ներկայացնում է «կեղծ ու փշացած դժուլդ», եւ որ իսկական հայրենասերը բանահրանով է վերաբերվում «կեղծ գաղափարախոսությանը կամ թյուր կրոնին, որոնք դիմի հիմի համոզեն իրեն, թե աշխարհաբարձրացիությունն ավելի վեհ է, քան հայրենասիրությունը, իսկ մարդը՝ սիրո ավելի արժանի, քան ժողովուրդը»:

Ի տարբերություն դահողանողականների, ազատականները հիմված են կասկածի տակ առնել ազգ-ղետության լեզիտիմությունը: Ազատականության տեսանկյունից, հատուկ ինքնությունները վտանգավոր են, բանզի «մենք»-ի եւ «նրանք»-ի միջեւ ստեղծում են արգելվեր ու սահմանազատիչ գծեր: Ազատականները նախընտրում են նայել առաջ՝ այն ժամանակները, երբ, Սթրոուք Թելրոքի արտահայտությամբ, «ազգային կարգավիճակը, ինչողիսին որ մենք այն գիտենք, կը որ իր նշանակությունը, եւ բոլոր ղետությունները կը մրցունեն միասնական գլորալ իշխանությունը»: Նույն ոգով է Ոիչարդ Սենեթը բացահայտում «ազգային ինքնության չարիքը», իսկ ենի Յարմանը «նողկալի» է համարում այն, որ ամերիկյան ուսանողներին սովորեցնում են, թե իրենք առաջին հերթին Միացյալ Նահանգների բաղաբացիներ են:

* * *

Տնտեսական գլորալացումը ողջ աշխարհում առաջացնում է խօսում առազգայնացած վերնախավի ու ազգայնական զանգվածների միջեւ: Յզորանում է գործարանների, դաշտավայրերի և անձանց, գիտնականների ու լրագրողների միջազգային դասը, որի ներկայացուցիչները մշտական անձանց, համագործակցում միմյանց հետ եւ դաշտավայրերի առեւտրի զարգացման ու ներդրումների, ազատական ժողովրդավարության եւ ուսումնական տնտեսության տարածման բաղաբացիների լայն զանգվածների տեսքում առաջարկում են ազգայնական, հակաազատական եւ ամբոխավարական հակազդումը գլորալացմանը: Միացյալ Նահանգներն ամենեւին էլ դաշտանված չեն այս միտումներից:

Ամերիկյան ուժն ու հարստությունը հասել են իրենց գագաթնակետին, ի տարբերություն ազգային միասնության, տնտեսական արդարության եւ մշակութային արժեքների: Լայն իմաստով, ամերիկյան ազգային ինքնությունը կանգնել է իրեն ներթելից բայցայող մոլուխությունալիզմի եւ վերեւից սրբողանող աշխարհաբարձրացիության մարտահրավերների դեմ: Դայրենասիրությունն ամերիկյան վերնախավի մեծ մասի մոտ հարգի չէ: Դնարավոր է, որ աղագայում Ամերիկայի համար լուրջ վտանգ ներկայացնեն Չինաստանը, Ռուսաստանը, իսլամական աշխարհը կամ էլ թօնամական երկրների որեւէ խմբավորում: Սակայն այսօր ամերիկյան միասնությանը, մշակույթին եւ հզորությանը ստպանացող վտանգներն առավել մոտ են գտնվում: Դասական դահլյանողականության եւ նեղադահլյանողականության անհրաժեշտ դաշտախանությունն է, ինչը դեմք է ամրագրի որոց կարեւոր ճշնարտություններ. Ամերիկան կրոնական երկիր է: Դայրենասիրությունը արժանադաշտավորություն է: Ումիկերսալիզմն ամերիկանիզմ չէ: Ազգայնականությունը մեկուսացվածություն (իզոլյացիոնիզմ) չէ:

Այդ ճշնարտություններն արձագանք են գտնում ամերիկյան ժողովրդի մոտ: Պահլանողականներն Ասծոն ու երկրի առջեւ իրենց դաշտավորություններով առանձնանում են ազատական շատ վերնախավերից, բայց միասնաբար են հանդես գալիս ամերիկյան ժողովրդի հետ: Ամերիկան, զգալի չափով, ստեղծվել է կրոնական շարժառիթներով, եւ ամերիկյան ողջ դաշտության ընթացքում օսար դիտողները, որդես ամերիկյան ժողովրդի բնութագրային տարբերակիչներ, նօել են նրա կրոնական ակտիվությունն ու թունդ նվիրվածությունը հավատին: Ամերիկան, բոլոր թույլատելի գնահատումներով, իր կրոնասիրությամբ առանձնանում է մյուս հարուստ երկրներից: Տարբեր հարցախույզներում ամերիկացիները համարյա միշտ առավել հայրենասեր են դուրս գալիս եւ ավելի շատ

հղարտանում իրենց երկրով, բան մյուս ազգերի ներկայացուցիչ-ները: Դայրենասիրությունն ու կրոնը ամերիկյան ինքնության ռազմական տարրերն են:

Սա խոսում է այն մասին, որ առողջ ազգայնականությունը կարող է խիս հրապուրիչ լինել հասարակության համար եւ որդես այլընտրանֆ ծառայել առավել նեղ մոտեցումներին, որոնք նույնականացնելու համար կարող են հասարակական աշակցության արժանանալ: Առողջ ազգայնականությունն այլընտրանֆ է եւ դառակտող մոլուստուրալիզմին, եւ այլամերժ մեկուսացվածությանը, եւ ունիվերսալիզմին: Դա իիմֆ է, որի շուրջ, հանուն աշխարհում ամերիկյան ժահերի առաջնորդության մասին ազգային միասնության հաստատման, կարող են միավորվել դահդանողականները:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ Յ ՈՒ Ն

ՆԵՐՑԵՂԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ	1
ՈՒՐՔԵՆ Սաֆրասյան ՊԱՐՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՆ-ՈՒՄ	4
Գագիկ Տեր-Ջարությունյան ԱՄՆ-ՈՈՒՍԱՍԱՆ. ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ՍԱՌ ՊԱՏԵՐԱԳՁԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	10
ՍԵՒԱԿ Սարուխանյան ԱՄՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼՈԲԱԼ ՎԵՐԱԴԱՍՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԾՈՒՐՁ	18
Սարգիս Ջարությունյան ԻՐԱՔՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԾՈՒՐՁ	26
Դավիթ Հովհաննիսյան ԻՍԼԱՄԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ՄԱՍԻՆ	31
Արան Փառայան ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՄԵԴԱԿԱՆ ԱՇԽԱՐԴԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ	41
ԳԵԼՈՐԳ Յազըճյան ՀԱՄԱԹՈՒՐՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻԹ-Ի ԶԻՆԱՆՇԱՆԸ	47
Սամուել Հանտինգտոն ԱՌՈՂՋ ԱԶԳԱՅԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	51

*Շատիկի վրա դատկերպած է
Մոավ լեռը*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ

Երևան, 375010, Մելիք-Աղամյան 2: Դեմ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթ՝ օֆսեթ, ֆորմատ՝ 70×108 1/16:
Պայմանական 3,25 մամուլ: Տպաժանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» և «Vs Helvetica»:
Վկայական՝ O1U 000176:
Տպագրվել է «Անարաս» տպարանում: